

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Կաթնաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի /3 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև1),
2. Փաստաթուղթ / դիպլոմ / «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկ:  
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:  
Փաստաթղթերն ընդունվում են սույն հրապարակման օրվանից մինչև 2018թ.հոկտեմբերի 3-ը ներառյալ , ամեն օր՝ 10<sup>00</sup> -ից-15<sup>00</sup>-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:  
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2018թ.հոկտեմբերի 5-ին՝ ժամը 15<sup>00</sup>-ին՝ Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ , գյուղ Կաթնաղբյուր 2-րդ փողոց շենք 26:

Տեղեկությունների համար զանգահարել՝

(093) 88-24-51 հեռախոսահամարով:

ՀՎՀՀ - 03510278